

ԳՐԱԽՈՍԱԿԱՆՆԵՐ

ՀԱՅԿ ՀԱՍԲԱՐՁՈՒՄՅԱՆ

ՀԱՅ ՎԵՊԻ ԳԻՏԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

Վեպը՝ որպես արձակի ամենածավալուն ձև, որպես «արվեստի ինտելեկտուալացման ամենաբարձր աստիճան», բոլոր ժամանակներում հավակնում է առավել մեծ ընդգրկունությունամբ ներկայացնելու որոշակի իրականություն և այդ ներկայացման համապատասխան որոշակի գործառույթների ու վերաբերմունքի կրող է: Վեպում պատկերվող իրականությունն արդեն պայմանավորված է վիպասանի տեսանկյան լայնությամբ ու որոշակի արժեքային համակարգի առկայությամբ: Այս տեսանկյամբ էլ թե վեպը և թե վեպի մասին որևէ ուսումնասիրություն ճանաչողական-իմացաբանական շատ մեծ արժեք ունի:

Հայ վեպը, ծնվելով 19-րդ դարի 40-ական թվականներին, սկզբում հարահոս, ապա, ավելի ուշ՝ գիտակցված բովանդակային ու կառուցվածքային ամբողջությամբ ստեղծվել է ուրույն ազգային դիմադեմով և կերտել իր յուրօրինակ, երբեմն էլ՝ համաշխարհային վեպի պատմությունից շատ տարբեր տարեգրություն: Պատճառն այն է, որ հայ վեպի արմատները կապվում են ոչ թե հունա-հռոմեական կամ բյուզանդական գրական ավանդների, այլ մերձիկնյա բանահյուսության և հին գրականության, այնպես էլ միջնադարյան գրական որոշ ժանրերի հետ: Այդուհանդերձ հայ գրական-գեղագիտական միտքը մինչև խաչատուր Աբովյանի հանճարեղ վեպի հրատարակությունը դեռևս չէր գտել այս ավանդները միահյուսելու ժանրի գեղագիտությունը ստեղծելու ճանապարհը: Ըստ այսմ էլ՝ մինչև Աբովյանը դեռևս հայտնաբերված չէր իրականի և գեղարվեստականի հարաբերության այն կատարյալ դրսևորումը, որ ի հայտ եկավ միայն մեծ լուսավորչի ստեղծագործությամբ: Վեպը դարձավ մեր ժողովրդի գեղարվեստական մտածողության կարևոր հանգրվան և ավելի ուշ մեր մյուս մեծ վիպասանի կողմից համեմատվեց ազգային կյանքը պատկերող՝ լուսավո-

րության գործառույթով օժտված կախարդական Հայելու Հետ. «Ռոմանները ազգերի գրականության մեջ կատարում են ամենակարևոր պաշտոն, ռոմանները որպես ազգերի ըարոյական և իմացական կյանքի պատմագրութիւնը անվանում են նոցա բարձր և վարքի, նոցա սովորութիւնների կենդանի պատկերքը գալոց սերնդին: Ռոմաններն են այն կախարդական Հայելիքը, որոնց մեջ ազգերը տեսնելով յուրյանց կյանքի տգեղ և ավերված պատկերքը, յուրյանց մոլորութիւնների ամոթալի նկարագիրը, ուսանում են շինել և բարեկարգել յուրյանց դրութիւնը»²:

Հայ վեպի գիտական ուսումնասիրութեանը սկիզբ է դրվել նախորդ դարի կեսերին, սակայն մինչ օրս չէր ստեղծվել Հայ վեպի համակարգված, գիտական և ամբողջական ուսումնասիրութիւն: Այս բացը լրացնելու եկավ ՀՀ ԳԱԱ Մ. Աբեղյանի անվան գրականութեան ինստիտուտի կողմից պատրաստված և 2005 թվականին տպագրված «Հայ վեպի պատմութիւն (19-րդ դար)» Հիմնարար ուսումնասիրութիւնը:

Գիրքը բաղկացած է ակադեմիկոս Սերգեյ Սարինյանի վեպի պատմութեան և տեսութեան ընդարձակ «Ներածութիւն»-ակնարկից, երեք ընդգրկուն մասերից, «Վերջաբանից» և Հայ վեպն ուսումնասիրողների Համար անգնահատելի արժեք ունեցող «Հայ դասական վեպի ժամանակագրութեան աղբյուրներ» մասից: Բացի այս՝ գրքի յուրաքանչյուր մաս առանձին Հեղինակներին նվիրված գլուխներից զատ ունի նաև առանձին տեսական-ընդհանուր առաջաբան, որտեղ էլ ժամանակաշրջանի լույսի ներքո բաժանական սեղմ քննվում են Հայ վեպի զարգացման ուղղութիւնները, միտումներն ու առանձնահատկութիւնները:

Գրքի ընդհանուր խմբագիր ակադ. Ս. Սարինյանը, ի սկզբանե մատնանշելով վեպի վերաբերյալ հսկայական գրականութեան առկայութիւնը, «Ներածութեան» մեջ Հնարավորինս ամփոփ և համառոտ ներկայացնում է Հայ վեպի պատմական ուղին և տեսութիւնը՝ Համաշխարհային վեպի պատմութեան և տեսութեան բաղադրամաս: Քննութիւնը կատարվում է վեպի թե՛ գրականագիտական և թե՛ մշակութաբանական-իմացաբանական արժեքի բացահայտման ու ներկայացման ճանապարհով: Ներածութեան Հեղինակը ձգտում է գտնել մեկ արտահայտութեամբ, նախադասութեամբ անդրադառնալ վեպի ուսումնասիրութեան առավել նշանակալի տեսաբաննե-

րին ու տեսություններին, ինչի հետևանքով «Ներածությունը» չափազանց հազնցված է և նյութի առատության պատճառով՝ երբեմն կցկաուր: Այդուհանդերձ Ս. Սարինյանին հաջողվում է խորապես քննել և ներկայացնել մեր վեպի ծագումնաբանությունը և հնարավոր արմատները՝ հայոց մեջ ժանրի զարգացման ճանապարհը բաղդատելով համաշխարհային վեպի ծագման ու զարգացման օրինաչափությունների հետ. «Այսպես ուրեմն, մեր ինքնազդիտակցման սկիզբը վիպասանությամբ եղավ, որը էպիկական իր բնույթը պահպանեց. հինգերորդ դարի գրավոր մշակույթում, իմաստասիրական, պատմագրական, վարքագրական մատյաններում: Մենք աշխարհն ընկալում էինք ոչ թե բանաստեղծությամբ, այլ պատմողական մտածողությամբ», — եզրակացնում է գիտնականը²:

Գրքի առաջին մասն ընդգրկում է մեր դասական վեպի պատմությունը սկզբնավորումից՝ 19-րդ դարի 40-ական թվականներից, մինչև նույն դարի 50-60-ական թվականները: Այստեղ հեղինակները (Ա. Ալեքսանյան, Ս. Սարինյան) հետևողականորեն ցույց են տալիս այս շրջանում մեր վեպի գրեթե բոլոր դրսևորումներն ու օրինակները՝ սկսած կրոնական վիպագրությունից մինչ «Ինտելեկտուալ ներքին հոսքերի զուգորդությամբ», «վերին աստիճանի բարդ»⁴ Խաչատուր Աբովյանի «Վերջ Հայաստանի» վեպն ու մինչ Միքայել Նալբանդյանի ստեղծագործության վիպագրական մասը: Այս մասն ընթերցողի համար ունի առաջին հերթին ճանաչողական-պատմական արժեք, քանի որ այնտեղ ներկայացվող հեղինակները և վեպերի մեծ մասը ծանոթ են ընթերցողների միայն նեղ շրջանակի: Այս մասում հայ իրականության մեջ առաջին կրոնական, վարքագրական, թարգմանական վեպերի կողքին ներկայացվում է հայ դասական առաջին վեպն ու վերջինիս բերած տեսական ու գեղագիտական նորությունները: Այս խնդրի շուրջ էլ ծավալվում է հայ գրականության համար ընդհանրապես և ի մասնավորի վիպագրության համար մշտապես արդիական եվրոպական և ասիական վիպագրական-գրական մոդելների վերաբերյալ, դեռևս Աբովյանի կողմից սկսված, ապա 1859 թ. «Արևմուտք» հանդեսում նոր թափ ստացած բանավեճը. «Երկար մտորումներից հետո միտքս եկավ Ադասու դժբախտ պատմությունը: Սակայն ի՞նչ ձևով ես այն պիտի վերարտադրեի: Որպես եվրոպական ճաշակի ու ոճի վեպ, դա հո վերին աստիճանի անմտություն կլինեի: Բանաստեղ-

ծուծթյուն, ինչպես և վեպը, իմ կարծիքով պետք է համապատասխանի ժողովրդի գաղափարներին ու զգացմունքներին և կառուցված լինի այնպես, որ պահպանի նաև ներդաշնակությունը, կենդանությունը, տիպերը և հետաքրքրականությունը», - գրում է Խ. Աբովյանը⁵։ Հենց այս «ինչպես»-ի, այսինքն՝ աբովյանական հոացքի իրականացման մեջ էլ թաքնված է մեր դասական վիպագրության հիմքը, որի աստիճանական բացահայտումն էլ կատարում է Ս. Սարինյանը՝ ի վերջո իրավացիորեն հանգեցնելով միակ ճիշտ և համադրական բնորոշման. «Ամենից առաջ իր ամբողջության մեջ գրական հայտնություն լինելով, այն խտացնում է ազգային-գեղարվեստական մտածողության փորձը, եթե ոճի պատմաէպիկական շերտերով այն կրում է դասական պատմագրության և կլասիկական վեպի գեղարվեստական փորձը, ապա պատկերային այլ հատկանիշներով աղեկսվում է միջնադարյան բանաստեղծության, գուսանական սիրավեպի, վարքագրական ու էպիստոլյար գրականության պատմության ինքնակենսակներին»⁶։

Հայ վեպի ժանրային բնույթի խնդիրը՝ արևելյան-առասպելական կամ եվրոպական-տրամաբանական, քննության առարկա է նաև գրքի մյուս մասերում և հատկապես մեր վիպագրության ծաղկման շրջանն ընդգրկող՝ 19-րդ դարի 70-ից 90-ական թվականներն ընդգրկող երկրորդ մասում։ Այս շրջանում, ինչպես նկատում են հեղինակները, վիպագրության «ժանրը կատարելագործվում է, թե՛ ըստ ձևի, և թե՛ ըստ բովանդակության»⁷։ Ժանրի բարեշրջությունն ընթանում է տրոհման և թեմատիկ բաժանման ճանապարհով, աբովյանական ավանդներով ստեղծված սինկրիտիկ վիպագրությանը մասամբ փոխարինում է սոցիալական-կենցաղագրական, պատմական, ազատագրական վեպը։ Այստեղ էլ վերևում սկսված վեպի բնույթի վերաբերյալ բանավեճը մասամբ վերափոխվում է աբովյանական և ոչ աբովյանական վիպասանական ավանդների ներքին բախման և յուրաքանչյուր հեղինակի դեպքում յուրօրինակ դրսևորում ստանում։ Այս մասի, ինչպես և ողջ գրքի կարևոր առավելություններից մեկը հայ վեպի ծագման ու զարգացման օրինաչափությունների անընդհատական ու տրամաբանական ներկայացումն է, ինչի հետևանքով վիպագրության վերաբերյալ յուրաքանչյուր խնդիր ներկայացվում է մեծ ժամանակային ընդգրկմամբ՝ ծագումից մինչև լուծում։

Պերճ Պոռչյանի, Ղազարոս Աղայանի, Մեհենցի, Տիգրան Կամսարականի, Բաֆֆու և այդ շրջանի մեր ականավոր մյուս վիպասացների ստեղծագործությունները այս մասում առանձին ծավալուն դիտլիսեր են նվիրված, որոնք տարբեր ծավալներով և տարբեր խորությամբ փորձում են վերականգնել այս հագեցած գրական շրջանի պատկերը: Նյութի բազմազանության և տարբեր հեղինակների առկայության արդյունքում այս մասում որոշ ընդհանուր բացթողումներ են նկատվում: Ի մասնավորի՝ երկրորդ մասի տարբեր դիտլիսերը հարված են տարբեր ուժով ու ընդգրկունությամբ. տարբեր հեղինակներ տարբեր մեթոդաբանությունից են օգտվում, այստեղից էլ տարբեր, երբեմն էլ հակասական զնահատականներ ու վերաբերմունք են դրսևորում քննվող նյութի, մասնավորապես և ընդհանրապես հայ վիպի պատմության և տեսության բազում խնդիրների վերաբերյալ. տարբեր հոգևածներ տեսական-գիտական տարբեր հագեցվածություն ունեն: Այս բացթողումները բնորոշ են նման հավաքական աշխատություններին և ընդհանուր առմամբ չեն խաթարում նյութի մատուցման նախապես ընտրված եղանակը:

Ուշագրավ է վիպագրական ավանդների և մեր վիպի ժանրային ուղղվածության վերաբերյալ ներքին բանավեճի շարունակությունը Բաֆֆու մասին պատմող գլխում: Բաֆֆին որոշակիորեն իրեն սահմանադատում է ինչպես արժյանական ավանդներից, այնպես էլ սերնդակից գրողներից, սակայն ընդհանուր «Ազգային վիպասանության» համակարգի ներսում, ինչպես նկատում է Ս. Սարինյանը, պահպանում է նույն սկզբունքները, որոնք ծագում են պատմական ուրույն հանգամանքների վրա հիմնված աշխարհայացությունից. «Լուսավորիչների մարդկություն-ժողովուրդը հասկացությունը ներշնչվում է ռոմանտիզմի ժողովուրդ-ազգ հասկացությունը, հավաքական իմաստ տալով հասարակական կյանքի ամբողջությանը: Սա ազգային գաղափարաբանությանը ներարկում էր համապարփակ բովանդակություն, գեղարվեստական արտահայտություն տալով «ազգային վիպասանությունը»⁸: Այս ճշգրտորեն սահմանված երևույթն է, որ ամբողջացնում է մեր այս շրջանի արևելահայ վիպասանների ստեղծագործությունը:

Ի տարբերության արևելահայ գրական-մշակութային իրականության՝ արևմտահայ վիպասանության դրսևորումները անսփա-

պես կապվում են եվրոպական վիպական ավանդների հետ, որոնք էլ, թարգմանական ճանապարհով մուտք գործելով արևմտահայ գրական դաշտ, իրենց ինքնուրույն դրսևորումներն էին ունենում: Այս տեսանկյունից ուշադրության արժանի է Մատթեոս Մամուրյանի վիպագրական ժառանգությանը նվիրված գլուխը, որի հեղինակը վաղամեծիկ գրականագետ Գրիգոր Հակոբյանն է: Ինչպես այս, այնպես էլ Գ. Հակոբյանի աշխատասիրության մեջ ստեղծված մյուս գլուխները («Գրիգոր Զոհրապ», «Տիգրան Կամսարական», «Գրիգոր Արծրունի», «Գրիգոր Սարաֆյան») աչքի են ընկնում ընդգծված գիտականությամբ, քննության կոնկրետ մեթոդաբանության առկայությամբ, տեսական մտքի հստակությամբ ու սահմանման աստիճանի հասնող բնորոշումներով: Գրականագետը լավագույնս տիրապետում էր 19-րդ դարի երկրորդ կեսի արևմտահայ գրական-մշակութային կյանքի անցուղարձեօրին ու առանձնահատկություններին և կարողանում նախ սոցիալ-պատմական, ապա և առավելապես գրական տեքստի կոնկրետ գեղարվեստական իրականության ընդգրկուն վերլուծությամբ ներկայացնել վիպասանության ընդհանուր պատկերը. «Գրական շարժումն աներկբա կրում էր այն գիտակցությունը, որ գեղարվեստական ընթացում իր գոյությունը լիարժեք դարձնելու համար պետք է համապատասխան վիպագրություն ունենալ, քանի որ ժանրը գրական կյանքում բացարձակ առավելագույնի հնարավորություններ է ընձեռում», — այս սեղմ ու ճշգրիտ սահմանմամբ հեղինակը պատճառաբանում է 19-րդ դարի 80-ական թթ. արևմտահայ վիպասանության վերելքը:

Հասարակական կյանքի ներքին պահանջով էր պայմանավորված նաև 19-րդ դարի 90-ական թվականների ռեալիստական գրականության վերելքը: Հասարակությունը զարգացման մի նոր աստիճանում նոր գրականության և հատկապես վեպի կարիք ուներ: Ռեալիստական վեպն արդեն որոշակիորեն տարբերվում է ռոմանտիկական հորիզոնական-նկարագրողական վեպից, իր ուղղահայաց ներհայեցողությունով ու ընդգծված վերլուծական բնույթով: Այս շրջանի վիպասանության դեմքերի՝ Մուրացանի, Շիրվանզադեի, Նար-Դոսի, Տիգրան Կամսարականի Արփիար Արփիարյանի ստեղծագործությանը նվիրված է «Հայ վեպի պատմության» երրորդ մաս: Հայ վեպի համար բավական հակասական մի ժամանակաշրջան՝ 19-րդ դարի 90-ական թվականներն ընդգրկող այս շրջանը վի-

պագրական իրականության մեջ նշանավորվում է ընդգծված միտումնավորությամբ, ինչն էլ լավագույնս արտահայտվում է Մուրացանի խոստովանության մեջ. «...Չեմ աշխատել գրվածքներս ազատ պահել ժամանակակից ցավերին վերաբերող տենդենցիայից, թեպետ Հավատացած եմ եղել, որ այդ տեսակ գրվածքների կյանքը կարճ է լինում»¹⁰: Հենց նոր ու տարբեր փիլիսոփայական ուղղությունների հետ Համադրության մեջ էլ առավելապես ներկայացվում է Հայ վեպի պատմության այս շրջանը, ինչի պատճառով գեղարվեստական խնդիրները գրքի այս մասի որոշ գլուխներում ետին պլան են մղվում և մեծ ուշադրություն է դարձվում ստեղծագործությունների գաղափարական-փիլիսոփայական կողմին: Ասվածը վերաբերում է Հատկապես Շիրվանզադեի ստեղծագործությանը նվիրված գլխին, որտեղ գրողի ստեղծագործությունը գրեթե ամբողջությամբ ներկայացվում է դրապաշտական փիլիսոփայության Համատեքստում: Նյութի ներկայացման նման եղանակը նկատելի է նաև մյուս Հեղինակների ստեղծագործությունների վերլուծության դեպքում: Նման միտումների արդյունքում նյութն ըստ մեզ միակողմանի է ներկայացվում:

Գրքի վերջաբանում սեղմ ներկայացվում են 20-րդ դարասկզբի Հայ վեպի զարգացման հիմնական միտումները, այսինքն՝ ոչ թե կատարվում է գրքի ամփոփում, այլ ներկայացվում է վեպի պատմության մի նոր շրջափուլ. այս դեպքում «Վերջաբան» վերնագիրը կարծես թե տեղին չէ:

Չափազանց կարևոր է ու մեծ արժեք ունի գրքի՝ Հայ վեպի ժամանակագրության աղբյուրների վերաբերյալ մասը, որն ընդգրկում է 1801-ից 1920 թթ. ընկած ժամանակահատվածը: Այստեղ էլ, ըստ տարիների, Հնարավորինս ամբողջական ներկայացվում են տպագրված վեպերի ցանկերը:

Ընդհանուր առմամբ ծանրակշիռ այս գիրքը անգնահատելի արժեք ունի Հայ վեպի պատմության և տեսության ուսումնասիրության համար: Այստեղ հայտնի դասականների կողքին ընդգրկված են Հեղինակներ, ստեղծագործություններ, տեսություններ, մոտեցումներ, որոնք դեռևս անծանոթ են մեր գրականագիտությանն ու ընթերցողին: Այս ուսումնասիրությունը նոր լույս է սփռում Հայ վեպի պատմության և աղբյուրագիտության բազում հարցերի վրա, ինչն էլ, ըստ գրքի խմբագրակազմի, «Հայ

վեպի պատմություն» գլխավոր նպատակներից է. «Հայ դասական վեպի պատմությունը» չի կարող հավակնել «տեսական պատմության»: Այն ժամանակագրական պատմություն է՝ նյութի աղբյուրադիտական համակարգությունը: Վիպական ոչ մի ստեղծագործություն դուրս չի մնում հետադրություն շրջանակներից: Սա պետք է համարել սույն աշխատության գիտական գլխավոր առաջադրություններից մեկը»¹¹:

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Ա. Քամյու, Սիգիփոսի առասպելը, Երևան, 1995, էջ 119:
2. Բաֆֆի, Երկերի ժողովածու, Երևան, 1955, հատ. 1, էջ 61:
3. Հայ վեպի պատմություն (19-րդ դար), Երևան, 2005, էջ 18:
4. Նույն տեղում, էջ 55:
5. Խ. Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, Երևան, 1956, էջ 391:
6. Հայ վեպի պատմություն (19-րդ դար), Երևան, 2005, էջ 68:
7. Նույն տեղում, էջ 121:
8. Նույն տեղում, էջ 221:
9. Նույն տեղում, էջ 424:
10. Սուրաքան, Երկերի ժողովածու, Երևան, 1963, հատ. 7, էջ 138:
11. Հայ վեպի պատմություն, էջ 34: